ԱՐՏԱՇԵՍ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻ ՊՈԵԶԻԱՆ

ՎԱՐՍԻԿ ՇԱՄԼՅԱՆ

XIX դ. վերջի և XX դ. սկզբի արևմտահայ քնարերգության ինքնատիպ դեմքերից է Արտ. Հարությունյանը, որի ստեղծագործական հետաքրքրություններն ընդգրկել են մի շարք բնագավառներ։ Նա տաղանդավոր բանաստեղծ էր, շնորհալի թարգմանիչ, կրքոտ հրապարակախոս, գրականության տեսաբան, «հայտնի գրագետ և անաչառ հրապարակախոս»[1]։

Ժամանակակիցների վկայությամբ, Հարությունյանը բնագրով կարդացել և թարգմանել է ֆրանսիացի հանրահայտ գրողներին, ինչպես նաև ծանոթ է եղել Գոգոլի, Տոլստոյի և ուրիշների ստեղծագործություններին։

Հարությունյանի գրական առաջին քայլերը սկսվել են անցյալ դարի 90-ական թվականների վերջերին «Բուրաստան մանկաց»-ի էջերում՝ Մանիշակ ծածկանունով, այնուհետև հաջորդաբար լույս են տեսել նրա առաջին ցավառական պատկերները՝ Կարո ծածկանվամբ։ Դարասկզբին Հարությունյանն արդեն ճանաչված բանաստեղծ էր և տպագրվում էր արևմտահայ գրեթե բոլոր պարբերականներում ու ամսագրերում՝ Մալկարացի Կարո, Արտաշես Հարությունյան ստորագրությամբ։

Գրական գործունեության առաջին իսկ քայլերից Հարությունյանը հանդես եկավ իբրև հարուստ կենսաճանաչողության տեր, բանաստեղծական հատուկ մտածողություն ունեցող հեղինակ։ Թեև գիտական մտքի կենտրոնից հեռու էր նա, սակայն ապրում ու շնչում էր ուրդիական կյանքով և ձգտում գեղարվեստորեն արտացոլել ժամանակակից իրականության այն երևույթները, որոնք իրենց էությամբ առավել ծանոթ ու հարազատ էին։ Այս իմաստով հետաքրքրական է Հարությունյանի ստեղծագործական կյանքի առաջին շրջանը՝ 900-ական թվականները, երբ լույս տեսավ «Լքված քնար» (1902 թ.) բանաստեղծությունների ժողովածուն, ուր նկատելի են հեղինակի բանաստեղծական ինքնուրույն ընկալումները և գեղեցիկ պատկերներ կերտելու արվեստը։

Դարասկզբի առաջին տասնամյակում Հարությունյանը ստեղծում է իր պոեզիայի լավագույն էջերը՝ «Երկունք» խորագրով։ Նա այդ ժողովածուով գրականություն բերեց իրականության, իրադարձությունների ու երևույթների իր ուրույն ընկալումը, իր ոճն ու գեղարվեստական մտածողությունը։

Հարությունյանի պոեզիան նորահայտ այն մտորումների ու տրամադրությունների հայտնաբերումն էր, որ թելադրում էր պոլսահայ կյանքը և որն, անշուշտ, իր կնիքը պիտի դներ բանաստեղծի գեղարվեստական մտածողության վրա։ Բանաստեղծը քայլում էր ժամանակին համընթաց և իր ստեղծագործություններում գեղարվեստորեն պատկերում էր ղոյություն ունեցող

---

1 «Հայ գրողներ», հ. 2, Թիֆլիս, 1910, էջ 807։

ունարդարություններն ու բռնակալների հակամարդկային էությունը, որոնց դեմ ծառանում էր ոչ միայն գրողը, այլև առաջավոր գաղափարներով սնված նոր սերունդը։

Արևմտահայերի բռնի տեղահանությունը, կոտորածները, թուրքական ցեղասպան քաղաքականությունը, մղձավանջային ողջ իրավիճակն ավելի ու ավելի են իշխում պոետին, և նա ըստ ամենայնի ըմբռնում է իր հայրենի երկրի հազարամյա կյանքի մեջ առաջացած պատմական մեծ փոփոխությունը.

Ու կը դիտեմ հորիզոնս գյազական.
Ուր աչ ավիր ու մոխիր կա սգավոր[2]։

Լսարանս վերապրելով իր ժողովրդի վիշտն ու տառապանքը, բանաստեղծը իր մռայլ խոհերը համարում է իր հարազատ ժողովրդի կյանքի տխուր արձագանքը։ Ժողովրդի պատմության այդ տագնապալի օրերին, դեպքերին ու հանգամանքներին զուգընթաց, Հարությունյանի քնարը արձակում էր մերթ հույսի ու հուսալքման, մորմոքի ու տվայտանքի, մերթ հավատի և վհատության տրամադրություններ.

Դիշեր։ Լճակին եզրը միս-մինակ.
Այս փայլի, բույլի, ստվերի պահուն,
Հոգվույս տենդագին խոր սլացքներում,
Պահ մը նեղ կուգա մեծ վիշտն համակ[3]։

Ճիշտ է, դաժան իրականությունը երբեմն ազդում է գրողի տրամադրության վրա և խորտակում բանաստեղծի պատրանքները, նրա քնարի լարերը հնչում են իբրև թախծի ու մորմոքի երգ ժողովրդի կյանքի ու ապագայի մասին, սակայն, ի վերջո, հաղթում է լավատեսությունը, և նա ոչ միայն չի ընկճվում դաժան իրականությունից, այլև լցվում է հաղթանակի անվերապահ հավատով։

Իր խոհերն ու մտորումները ավելի ցայտուն արտահայտելու համար բանաստեղծը դիմում է գիշերային հավիտենականության ու անդորրության նկարագրությանը։

Սերելով արևմտահայ գրականությունից, Հարությունյանը, շնորհիվ իր դիտողականության ու պայծառատեսության, որդեգրեց իր ժամանակակիցների հզոր կենսունակությունն ու մինչև վերջ պաշտպանեց այն։ Այդ կենսունակությունն օգնեց նրան գովերգելու այնքան հոգեթով ու հարազատ բնաշխարհը և այնտեղից վերցնելու իրեն հետաքրքրող թեմաների գույներն ու երանգները։

Այդ թեմաները, սակայն, ոչ թե սոսկ անհատական ապրումների արտահայտություններ են, ինքներգության փաստեր, այլ կենսական հարուստ բովանդակության բանաստեղծական դրսևորումներ։ Դրանք աչքի են ընկնում ներշնչվածությամբ և գաղափարական նպատակասլացությամբ.

---

2 Ա. Հարությունյան, Երկունք, Կ. Պոլիս, 1906, էջ 84։

3 Նույն տեղում, էջ 22։

Ու կը քալեմ։ Գիշերն երկայն,
Գիշերն՝ անհուն դեր կերկարի,
Ու կուշանա նվիրական
Արշալույսին ցոլքը բարի[4]։

Եվ որքան էլ գիշերն անհուն երկար է, խոհերով ու կսկիծներով լի, որքան էլ շուրջբոլոր ավեր կա սգավոր, և գիշերը ծանր է ու մթին, այնուամենայնիվ, բանաստեղծի խորհող միտքը կանխագուշակում է փիլիսոփայական այն մեծ խորհուրդը, որ գիշերվա հավիտենությանը պիտի հաջորդի առավոտը, արևածագը՝ խորհրդանշելով կյանքի «մշտավառ» արշալույսը։

Նուրբ են Հարությունյանի կերտած գիշերային դույներն ու պատկերները. Այդ նրբությանը, թերևս, հատուկ խորհուրդ և իմաստ է տալիս բանաստեղծի պայծառատեսությունը, որ նա ունի կյանքի ու ապագայի նկատմամբ.

Գարնան գիշերվան լուսնին տակ պայծառ,
Հեշտ է ինձ այդպես փարիլ անուրջին,
Ըղգալ ներսս ուժգին կյանքը մշտավառ,
Եվ սրբել հոդիս իր ցավերեն հին[5]։

Սպասման հոգեբանության բանաստեղծական լավագույն արտահայտությունը տվել է Մեծարենցը։ Դեռևս իր առաջին ստեղծագործությունների մասին նա գրել է. «Սպասման երկարաձիգ գիշեր մըն է, աղերսանքներով, հոգսերով. ցավերով և երբեմն էլ կայծկլտուն հույսերով լեցուն»[6]։ Թուրքական պաժան կապանքներից աղատվելու, պայծառ ու լուսավոր օրերի սպասումն էր այդ, որ վաղամեռիկ բանաստեղծը հեռավոր ափերից եկող իր նավակների վերադարձին սպասեց և այդպես էլ չտեսավ։ Սպասումը դառնում է կենտրոնական և տիրապետող զգացում թե՛ Մեծարենցի և թե՛ Հարությունյանի համար, թափանցում նրանց խոհերի ու զգացումների ներաշխարհը։ Այդ բարդ ու ծանր մթնոլորտում նրանք ապրում են հիասթափության ու հուսահատության պահեր, բռնկումներ։ Եվ ահա, ինչպես Մեծարենցի հոդին փոթորկվում է բաղում խոհերից ու մտորումներից, այնպես էլ Հարությունյանը գիշերային խավարի մեջ տագնապներ է ունենում, թե «Մեծ երազների» իրականացումը կարող է ուշանալ, սակայն փույթ չէ, քանզի «ճամփորդը» համառորեն ձգտում է հաղթահարել ճանապարհի դժվարությունները և հասնել հեռո՜ւ-հեռվո՜ւմ, թանձր խավարի մեջ նշմարվող կայծին, որը դեռ «արթուն էր և անշեջ».

Պիտի քալե ան հավիտյան
Միշտ հստակ կաթիլն իր ուժերով,
Գիշերն ինչ փույթ, ինչ փույթ ճամփան
Երբ կայծն անշեջ, կայծն է արթուն[7]։

---

4 «Շանթ», 1911, № 3, էջ 34։
5 Ա. Հարությունյան, Նոր քնար, Կ. Պոլիս, 1912, էջ 12։
6 Մ. Մեծարենց, Երկերի լիակատար ժողովածու, Երևան, 1934, էջ 278։
7 Ա. Հարությունյան, Նոր քնար, էջ 54։

Արևին հասնելու պարարանքն այնքան առարկայական ու շոշափելի է, որ ընթերցողը կարծեք տեսնում է այդ բոլորը։ Բանաստեղծը տարփանքով նվիրվում է արևին, ցանկանում է փարվել նրան և խարիսխ որոնել բնության ու կյանքի միջև։ Հավերժորեն արարող արևը բանաստեղծության էության մեջ է և այդ իսկ պատճառով ջերմացնում է ընթերցողին հոգեպես։ Արևին նվիրված հիանալի ստեղծագործությունները արդյունք են այն սիրո, որ բանաստեղծը տածում է մարդու կյանքի, ապրելու, վայելքի և ընդհանրապես աշխարհի նկատմամբ.

Ու նոր կիրքեր դիս կարծածես
Սրտիս տալով նորոդ թևեր.
Դեպի արևս ու դեպի վեր
Կը թռչիմ ես մահվան ծոցեն[8]։

Բանաստեղծի մտահղացումն ավելի պատկերավոր ու վառ է «Արևն ու Հյուլեն» բանաստեղծությունում, որը կարելի է դիտել իբրև քնարական արվեստի մի փայլուն նմուշ։ Կյանքով ապրող հոգու խանդավառ հիմն էր այդ, ուր քնարական հերոսի կենսալից հույզերը փոխարինվում են բնության ամենավառ երևույթներով։ «Արևի ջերմ համբույրեն» փոթորկվում է պոետի հոգին և լցվում կյանքի հրայրքով։ Արևի մտերմությունն ու ջերմությունն է զգում ու վայելում գրողը, նրա կենսաբույր շողերը կենդանություն և շունչ են հաղորդում գրողին և լուսավորում նրա ճամփան։ «Կապրիմ ուրեմն կյանքը և բաց կթողում հոգվույս բոլոր խորտակված պատուհանները»[9],— գրում է բանաստեղծը։

Նույն սիզբունքով են հյուսված Մեծարենցի «Արևերգերը», որոնք կյանքի արարման գովք են։

Երկու արվեստագետների ստեղծագործությունն էլ ներծծված է հայրենի բնության նկատմամբ ջերմ սիրով, սակայն իրականության նկատմամբ նրանց մոտեցումն ու վերարտադրությունը տարբեր է. Հարությունյանի ստեղծագործությունների բանաստեղծական մղումները, գաղափարական-գեղագիտական համակարգը, շրջապատող իրականության հետազոտության գեղարվեստական ընկալումը տարբերվում են Մեծարենցի ստեղծագործությունից։ Եթե Մեծարենցը դիմելով «բարի արևին» պաղատագին աղերսում է երկարացնել իր կյանքի արշալույսը. «Հիվանդ եմ, բարի արև, շողա՜, շողա՜...»[10], ապա Հարությունյանը, խանդավառված արևի բորբ ջերմությամբ, դիմում է նրան ասելով. «Արև, բարև, ջերմ համբույր տանք իրարու»[11]։

Հարությունյանն արևը ընդունում է իբրև պայծառ, հզոր և ազատ կյանքի խորհրդանիշ։ Դա բանաստեղծի լավատեսական կենսահայեցողության, կյանքի հարատևության, աշխարհի գեղեցկությունների ընկալման ու գնահատման արտահայտությունն է։

---

8 Ա. Հարությունյան, Երկունք, էջ 64։
9 Ա. Հարությունյան, Գիշերվան ճամբորդը, Երևան, 1968, էջ 92։
10 Մ. Մեծարենց, նշվ. աշխ., էջ 62։
11 Ա. Հարությունյան, Գիշերվան ճամբորդը, էջ 96։

Ի դեպ, Հարությունյանի՝ արևին նվիրված բանաստեղծությունների մեջ մռայլ նկարագրությունները խիստ սակավ են։ Նրա պոեզիայում նույնիսկ գիշերվա պատկերը ողողվում է լույսի և կյանքի հրայրքով։

Արևերգերում հասնելով բանաստեղծական բարձր վարպետության, գրողը ոչ միայն հաջող վերարտադրում, այլև այնպես է քնարականացնում այն, որ ընթերցողը, կարծես, փոխադրվում է նկարագրվող վայրը և բաժանում հեղինակի հուզապրումները։ Բանաստեղծի հետ նա վայելում է բնության հրաշք արևի տոնը, տոնն անհուն երգի, բույրի, հիացման և նրա հոգին լցվում կյանքով, հույզով ցնծագին.

Ու տոնն անհուն երգի, բույրի, հիացման,
Տոն բնության, շքեղ տոնը Արևին,
Փրթումներու լայն գրկին մեջ անսահման
Կը թրթռայ կյանքով, հույզով, ցնծագին[12]։

Այստեղով, Մեծարենցի և Հարությունյանի պոեզիայում գիշերը, իրիկնամուտը, մթնշաղը, մշուշը, արշալույսը և նրանց ստեղծած այլ բնապատկերներ ապրում և շնչում են նրբերանգների անսահման գեղեցկությամբ։ Դրանք բանաստեղծական ընկալումների բազմազանության, կյանքի այլևայլ երևույթների արտացոլման արտահայտչական միջոցներ, ձևեր, գույներ ու երանգներ են։

Մորմոքի և հուսալքման, սպասման և պատրանքի տրամադրություններ արտահայտող բանաստեղծը երգում է նաև սեր, բնություն։

Ինքնատիպ գույներ ու երանգներ ունեն բանաստեղծի երգած գարունը, աշունը, ամառը, ձմեռը, դրանք զանազան խոհերի ու մտորումների յուրօրինակ արտահայտչաձևեր են կյանքի մասին։ Երգելով սեր, բնություն, խնդություն, նա դրանք տոգորել է դարասկզբի գաղափարներով։ Հարությունյանն առանձնակի ներշնչանքով է երգել բնության թովչանքն ու հմայքը։ Դրա փայլուն վկայությունը «Այսպես կյանքեն» ոտանավորն է.

Վայրավուտին գեղեցկությանց վեհ տաճար,
Ես կը պաշտեմ բնությունը մայրական.
Բաց է հոգիս իր խորհուրդին մոգական
Դյութանքն անոր զիս կ'առինքնե չարաչար[13]։

Բնապատկերները բերում են ուրույն գեղեցկություն, քանի որ բանաստեղծը նկատում է առարկա-երևույթների հմայքը, որը, վերջիվերջո, ձուլվում է հոգու մեջ, զարմանալի նրբանկատությամբ ամբողջացնում իր ներքին էությունը։ Նրա գրչի տակ բազում պատկերներ բացում են բանաստեղծի հոգու ներաշխարհը, ստեղծում սիրո և կարոտի գրավիչ մթնոլորտ։ Բնությունը դառնում է միջոց՝ ճանաչելու աշխարհի հրաշալիքները, ըմբռնելու ճշմարիտը, լավն ու բարին։ Բնության ընկալումը Հարությունյանի պոեզիայում վեր է ածվում աշխարհի փիլիսոփայական ըմբռնման.

---

[12] Ա. Հարությունյան, Երկունք, էջ 40։
[13] Ա. Հարությունյան, Նոր քնար, էջ 42։

Պիտի բանամ հոգուս պայծառ
Պատուհանները բյուրավոր,
Եռանդալից ու խանդավառ
Ուժգին կամքով մը անսովոր։

Եվ անոնցմե հոգնակոհակ
Պիտի խուժեն լույսն ու Արև։
Բոլոր բույրերն, երգերն համակ
Պիտի պարեն հոն ակներև[14]։

Բնության մոտիվները Հարությունյանի պոեզիայում հանդես են գալիս իբրև բանաստեղծի հոգին պարուրող կենարար շունչ ու ոգի, թարմություն ու կյանք հաղորդող, հոգևկան աշխարհի այս կամ այն պահը երջանկացնող միջոցներ։ Բնությամբ հրապուրվելու, նրանով լցվելու ցանկությունը մեծ է դրոշի մոտ։ Նա հարազատորեն վիրարտադրում է այն իրականությունը, որին ծանոթ է մանկությունից, միշտ երազել է լինել «տերևախիտ անտառների եղնորդը», «հովիտների շուշանը», «լեռների զմրուխտը», «ծաղիկների բույրը», «երկնքի կապույտը», որպեսզի լիովին վայելի հայրենի բնության հրաշալիքները։ Նաև եկայուց հետո թիրև ոչ ոք այնպես նրբին չի դիտել բնության խորհրդավոր շարժումն ու գեղեցկությունը, ինչպես Հարությունյանը։

Մալկարայի պայծառ արշալույսներն ու վերջալույսները, աշնան գիշերները, լուսնյակն ու երկնքում փայլող աստղերը, ձյունալանջ շուշանները, վարդերի բացվող ծիլերը, այդ բոլորը բռնվում են խաղով և բանաստեղծի սիրտը լցնում նոր հուզապրումով.

Ու վայելել մեծ բնությունն համբորեն,
Ծրծել անոր հոգին, ավիշն ու եռանդ,
Արբշիռ կյանքով. կիրքով արբշիռ ուժգնորեն
Երազողի քաղցրիկ անուրջ սին տենչանք[15]։

Կյանքի կենսատու ավիշը վեր հանող այս փիլիսոփայությունն է ահա, որ հայտնաբերում է Հարությունյանը և հաստատում բնապաշտական իր հայեցությունը։

Հարությունյանի քնարական արվեստի նվաճումներից է նաև այն, որ նա իր խոհերն ու ապրումները կապում է կյանքի, բնության որևէ կոնկրետ իրողության շարժման, դրության պատկերման և իմաստավորման հետ։ «Կյանքի մեծ շարժման» գաղափարը առավելապես խոր է արտահայտվել նրա թե՛ արձակում և թե՛ «Նոր քնար» գրքի համանուն շարքում. «Կը սիրեմ արևը, որ կյանք կուտա ինձի, կը սիրեմ կյանքը, որ այսօրվա գոյությանս հանդիսարանն է»[16]։

Հարությունյանը միանգամայն բնականորեն է հաստատում կյանքի հաղթանակի փիլիսոփայությունը։ Նա գտնում է, որ մարդը պետք է բնության

---

14 Ա. Հարությունյան, Լքված քնար, Կ. Պոլիս, 1902, էջ 58։
15 Ա. Հարությունյան, Նոր քնար, էջ 14։
16 Ա. Հարությունյան, Գիշերվան ծամբորդը, էջ 94։

արտացոլումը լինի, լուծվի բնության հետ, աշխատի նմանվել նրան, թափանցի իրերի խորքը, իբրև «կայծ մը անջինջ», քանզի բնության լայն ծոցին մեջ են բոլոր ներդաշնակությունները, քանի որ բնությունը

Աստվածային ոսկերչությունն է վսեմ,
Որուն առջև կը ծնրադրեմ հոգեզմայլ[17]։

Աշխարհընկալման այս խորհրդածությունների մթնոլորտում Հարությունյանը բնապաշտորեն է լուծում բնության և մարդու փոխհարաբերության հարցը, ըմբռնում բնության և մարդու միջև եղած ընդհանուր կապը։

Ժողովրդական ավանդությունը նույնպես ներթափանցել է Հարությունյանի պոեզիայի մեջ։ Սյուժեի և ավանդության գեղարվեստական մշակումը, բնության երևույթների և մարդկանց կապն ու ներդաշնակությունը, պատկերների պարզությունն ու անմիջականությունը նրա բանաստեղծությունները դարձնում են ավանդության ոգուն հարազատ։ Դրա փայլուն վկայությունը «Ծայռ» ոտանավորն է։ Այստեղ նկարագրված է, թե ինչպես ժայռերը մարդկային կերպարանք են ստանում և հանդես են գալիս իբրև հարսանքավորներ, և երբ հարսը իր դեմքի գեղեցկությունը ցուցադրելու համար նետում է քողը, բնությունը սաստիկ զայրացած բացականչում է.

Ամբարտավան գեղեցկության այս ցույցեն,
Այդ ամբոխը կանիծե իր շանթերուն
Անեծքներովն անկարեկիր
Ու բոլորն ալ քար կդառնան, կը սառին՝
Դամված, անշարժ ու լռին[18]։

Այս ոտանավորը բնության հավերժական շարժման անձնավորված պատկերն է։ Ավանդության հետ կապված բնության երևույթները գեղարվեստական մշակման են ենթարկվում Հարությունյանի պոեզիայում և ստանում խոր մեկնաբանություն։

Հարությունյանի քնարերգության մեջ չկա հիմնական թեմաներից ու սյուժեներից անջատ որևէ նկարագրություն, ինչպիսին ունի Մեծարենցը հայկական բնաշխարհին նվիրած իր հոյակապ ստեղծագործություններում։ Այդ առումով երկու արվեստագետներն էլ իրենց հայրենասիրական զգացմունքներն ու խոհերը արտահայտում են բնության պատկերներում։ Քանի որ նրանց ստեղծագործություններում գործողության հիմնական միջավայրը բնությունն է։

Հարությունյանի սիրային պոեզիան աչքի է ընկնում զգացմունքների բազմերանգությամբ ու անմիջականությամբ.

Ու կը հյուսե, երազ ու սեր,— իր հոգին
Խոհեր թանկագին.
— Լուռ սպառում ուրիշներու հաճույքին,
— Հեգնանք տրտմագին[19]։

17 Նույն տեղում, էջ 95։
18 Ա. Հարությունյան, Լքված քնար, էջ 39։
19 «Մասիս», 1901, № 12։

Առաջին սիրո վերհուշների, երիտասարդական ռոմանտիկ և պատրանքային սիրո զգացմունքների անաղարտությունը նկատելի է բանաստեղծի սկզբնական շրջանի գործերում, սակայն աստիճանաբար սիրո հզոր ուժի փառաբանության կողքին հնչում են նաև այնպիսի տրամադրություններ, որոնք ծնվել են անհույս սիրո տվայտանքներից և սիրած էակի կորստյան ցավից։

Սիրո պոեզիայում մեծ տեղ են գրավում պոետի հոգեբանական դրությունները, նրա ներքին ալեկոծումները.

Այն ի՞նչ ըրիր, որ իմ մեջ,
Հոգվույս խորը դեռ մի բան,
Կը մընա ջերմ ու անշեջ
Անվրտար ու անխափան[20]։

Սրբ գրողը խորհրդածում է իր սիրած էակի մասին, լցվում է լավատեսությամբ։ Սիրած աղջիկը բովանդակ աշխարհ է, երջանկության ու հրապույրի խորհրդանիշ։ Իր սիրերգերում Հարությունյանը մաքուր զգացումով երդում է կնոջ արտաքին բարեմասնությունները, այդ բոլորը համեմատում բնության հրաշալի առարկա-երևույթների հետ՝ որպես գեղեցկության բացարձակ չափանիշ։ Նստած «աղամանդ աստղերուն» տակ, բանաստեղծը երգում է անմեղ կույսի կանացիական ժպիտը, նրա մեղմ ու քնքուշ հայացքը, ուսերին փռված ոսկեղօծ մաղերը, որոնք ոսկի թիթեռնիկների նման ծփում էին մարմնի շուրջը, իբրև «սուրբ խորան մաքրության»։ Ուրախությունը, երջանկության հասնելու ձգտումը ինքնըստինքյան ծնում է այն կորցնելու թախիծ ու տրտմություն։ Եվ պոետի հոգին համակվում է մոտալուտ դժբախտության նախազգացումով։

Սիրո պոեզիայում ակնհայտորեն բացահայտվում են բանաստեղծի հոգու թրթիռները, հարազատ սիրո կարոտը, կորցրած էակին վերստին գտնելու տենչանքը.

Ա՜հ, այդ չքնաղ պատկերը կը փնտրեմ դեռ
Այդ քաղցրիկ անուրջ։
Պայծառ աչուկներդ ըսին ինձի
Թե կը սիրեն զիս կաթոգին
Եվ հիմարորեն ես լացի
Երանությանս այս փառքին[21]։

Երբը բանաստեղծի համար դառնում է ապրելու և հարատևելու խորհրդանիշ, նա սիրո մեջ տեսնում է կյանքի հմայքը, աշխարհի գեղեցկությունները.

Բաց ինձ գիրկդ, ապրելու հույս
Անհրպելի այլ աղվոր,
Ու պարգևէ տխուր հոգվույս
Կյանքին ուժը փառավոր[22]։

---

20 Ա. Հարությունյան, Երկունք, էջ 14։
21 «Շանթ», 1912, № 29։
22 «Նաղիկ», 1903, № 6։

Հարությունյանի սիրո մոտիվով գրված ստեղծագործությունները բնավ էլ վերացական բնույթ չունեն։ Դրանք գրողի անձնական կյանքի, նրա կենսագրության հետ խորապես կապված են։ Հարությունյանի պոեզիան արդյունք է իր ապրած ու զգացած կյանքի։ Ճշմարտությունն այն է, որ անձնական կյանքի զանազան երևույթների հետ առնչվող իրողությունները չէին կարող գեղարվեստական մարմնավորում ստանալ, եթե դրանց մեջ բացահայտված չլիններին մարդու բնորոշ հոգեբանական գծերը։ Հարությունյանի կենսագիրներից Վահան Հարությունյանը հատկապես հիշատակում է նրա առաջին սիրո տխուր պատմությունը և դրա հետ կապում կյանքի տարբեր շրջաններում գրված ստեղծագործությունների խորհրդավորությունը։ Ըստ երևույթին, այստեղից էլ առաջացել են Հարությունյանի տանջալից ապրումներն ու հիասթափությունները, անհագ սիրո այրող տառապանքները.

Ամպեր, թև անոր երկիրն ալ երթաք
Համբույրես կրակ մ'ու բոց մ'աչերես,
Կուրծքիս ·խորերեն հեծեծանք մը տաք
Ու կայծ մ'ալ առնք տարեք իմ սերես[23]։

Այսպես է երգում սերը Հարությունյանը, որը դառնում է նրա անձնական վշտի ու դժբախտության պատճառը։ Կյանքի հանգամանքները խորտակում են նրա սիրո քաղցր պատրանքները։

Բանաստեղծը սիրերգերում մերթ արտահայտում է խանդավառության ու ոգևորության տրամադրություններ, իրական թե պատրանքային սերը դիտում է կյանքը իմաստավորող հզոր գործոն, «սերը հոլիի մը երկրորդ ծնունդն է», մերթ սիրած էակի գոյության փաստի զգացողությունը նրա սիրտը լցնում է երջանկության հզոր թափով, մերթ ողբում սիրո կորուստը, վայելքն ու հրապույրը, կարոտն ու թախիծը, մերթ համակերպվում իր վիճակի հետ և ստեղծում հոգու անդորրություն։ Այս բոլորը, իհարկե, Հարությունյանի պոեզիային հաղորդում են ճանաչողական մեծ արժեք և այդ իմաստով նա իր հետաքրքրությունը կպահպանի մշտապես։

Հարությունյանի պոեզիան աչքի է ընկնում նաև բնության, կյանքի, աշխարհի մասին խոհական-փիլիսոփայական խորհրդածություններով։ Դրանք ներքին հարստությամբ, մտքի խորությամբ, լայն մտահղացմամբ և բանաստեղծական բարձր արվեստով տոգորված գործեր են։ Հեղինակը երգում է մարդու հոգեկան աշխարհի, նրա անսահման ուժի ու կարողության հնարավորությունը, նրա ապրելու ու հարատևելու ձգտումը։ Տիրապետողն, անշուշտ, գրողի կենսասիրությունն ու լավատեսական պայծառ հավատն է, կյանքի հաստատման միտումը։ Այս բովանդակավորմամբ ու իմաստավորմամբ էլ պայմանավորված է պոետի կենսափիլիսոփայությունը և մարդկային հոգու խորքերը թափանցելու արտակարգ կարողությունը։

Թեև Հարությունյանի ստեղծագործությունների արտահայտչական ու պատկերավորման միջոցների հետ կապված հարցերը մեր նպատակադրումից դուրս են, սակայն անկարելի է մի քանի խոսքով չանդրադառնալ նրա բանաստեղծական արվեստի ինքնատիպ և արժեքավոր կողմերին։

---

23 Ա. Հարությունյան, Երկունք, էջ 19։

Հարությունյանի պոեզիայի ժողովրդայնությունը առկա է ոչ միայն ազգային կյանքի ու ավանդության, մարդու պատմական բախտի ու կենսափիլիսոփայության, սիրո ու բնության մոտիվներում, այլև լեզվաարտահայտչական միջոցներում։ Նա աշխարհաբար գրական լեզվի գեղարվեստական մշակման հիանալի օրինակ է տվել։ Դրա լավագույն ապացույցը լեզվական բարձր կուլտուրայով գրված նրա ստեղծագործություններն ու արձակ էջերն են։ Ընթերցողին դերում է Հարությունյանի կիրթ, արտահայտչական բազում հնարավորություններ ունեցող լեզուն, աշխարհաբար լեզվի հարուստ բառապանծից օգտվելու բացառիկ հմտությունը։ Գրողը իր հոգու ներքին ապրումներն ու մտորումները լիարժեք արտահայտելու համար օգտվել է բանարվեստի դարերով խտացած խոսքի պաշարներից, որոնք կենդանի շունչ ու ոգի են հաղորդել նրա պոեզիային։

Հարությունյանի բանաստեղծությունների հուզական և իմաստային ներդործությունը պայմանավորվում է ոչ միայն բնության երևույթները պատկերելու եղանակով, այլև մտքի խորությամբ, զգացմունքի ուժով, դրանց արտահայտման ձևով, որի մեջ կարևորը բառերի ու կապակցությունների դասավորության ու կիրառության ձևերն են։

Գեղարվեստական պատկերավորության զանազան միջոցները ներդաշնակորեն միահյուսվում են բանաստեղծությունների պատկերային ընդհանուր կառուցվածքի հետ որպես մի օրգանական, միաձույլ արտահայտություն՝ ցայտուն և տպավորիչ դարձնելով առարկա-երևույթների բանաստեղծական հմայքը։ Ահա մի նմուշ այդպիսի քերթության.

Հոգվույս խորը կարոտներ կան,
Որ կքանդեն զիս օրե օր,
Ինչպես բոցին կարմիր լեզուն
Մոմին ճերմակ մարմինն աղվոր[24]։

Հարությունյանի պատկերավոր մտածողությունն իր ամենացայտուն դրսևորումն է ստացել յուրօրինակ փոխաբերությունների մեջ։ Մի առանձին շարք են կազմում այն փոխաբերություններն ու մակդիրները, որոնք շնչավորում են բնության տարբեր երևույթները՝ ավելի շոշափելի դարձնելով իր ապրումները.

Իրիկունն է շատոնց մեռեր
Դագաղին մեջ լուրթ լեռներուն,
Ու գիշերը հագած սևեր
Կը սրփռե ցուրտն իր ձորձերուն[25]։

Գեղարվեստական կոնկրետ պատկերները Հարությունյանի քնարերգության ամենակենսական հատկություններից են, նրա բանաստեղծական արվեստի դրսևորման յուրահատուկ ձևերը։ Դրանց շնորհիվ է, որ նրա քերթվածների գաղափարական բովանդակությունը մեծ նշանակություն է ձեռք

24 Ա. Հարությունյան, Նոր քնար, էջ 57։
25 Ա. Հարությունյան, Երկունք, էջ 55։

բերում, քանզի առանց համապատասխան ձևի ոչ մի գաղափարական բովանդակություն գեղարվեստական իրականություն դառնալ չի կարող։ Այդ երկուսը միասնական հանդես են գալիս Հարությունյանի քնարերգության մեջ։ Սակայն հայրենասեր բանաստեղծի շատ մտահղացումներ ու ստեղծագործական ծրագրեր մնացին անկատար։ Ուժերի ամենածաղկուն շրջանում հարյուրավոր հայ մտավորականների հետ Հարությունյանը ևս զոհ դարձավ մեծ եղեռնին։

ПОЭЗИЯ АРТАШЕСА АРУТЮНЯНА

ВАРСИК ШАМЛЯН

Резюме

В конце XIX—начале XX вв. западноармянская литература, в частности, поэзия переживала большой подъем. Одновременно с Варужаном, Сиаманто, Мецаренцем в литературу вошел один из самобытных лириков западноармянской поэзии—Арташес Арутюнян. Он был талантливым поэтом, одаренным переводчиком, пламенным публицистом, тонким критиком.

Его перу принадлежат три сборника: «Покинутая лира» (1902), «Розовые схватки» (1906), «Новая лира» (1912). В своей лирике тончайшими поэтическими средствами он воспевал природу и любовь, выступающие в его стихах в неразрывном единстве.